Հաստատում եմ՝
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր Պ.Ավետիսյան

«15» հունվարի 2024թ.

ԿԱՐԾԻՔ
(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող **Վահե Ոսկանի Պողոսյանի «Կուսակցական լիդերության ինստիտուտի կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ

Հաստատվել է

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի քաղաքագիտության ամբիոնի 2024թ.-ի հունվարի 12-ի նիստում: Նիստին մասնակցում էին փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Մանուկյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու Ս.Ս. Շիրխանյանը, ավագ դասախոսներ Մ.Լ. Հարությունյանը, Ն.Ի. Մարգարյանը, դասախոս Ի.Ա. Քարամյանը:

Վահե Ոսկանի Պողոսյանի «Կուսակցական լիդերության ինստիտուտի կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում» թեկնածուական ատենախոսությունն արդիական և գիտագործնական նշանակություն ունեցող ուսումնասիրություն է: Թեկնածուական ատենախոսության արդիականությունը նախնառաջ պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման հաստատման պայմաններում կուսակցական առաջնորդության դերը նշանակալի

բարձրացել է: Այս թեման նաև կարևոր է իշխանության և կուսակցությունների միջև հարաբերությունների վերլուծության տեսանկյունից:

Աշխատանքը արդիական է նաև ՀՀ-ում կուսակցական առաջնորդության վերաբերյալ առկա գործնական հետազոտությունների սակավությամբ և ՀՀ-ում քաղաքական գործունեություն ծավալող կուսակցական առաջնորդների ուսումնասիրությամբ: Ատենախոսության մեջ քննարկվել են այն գործոնները, որոնց էվոլյուցիան պայմանավորել է Հայաստանի Հանրապետությունում կուսակցական առաջնորդության զարգացման գործընթացը, ինչը հեղինակին թույլ է տվել ամբողջացնել դրա դրսևորման առանձնահատկությունները: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը նաև փորձել է տալ կուսակցական առաջնորդության նոր սահմանում: Բացի տեսական կարևորությունից, այս հետազոտությունը ունի նաև կիրառական նշանակություն Հայաստանի համար, քանի որ մանրամասնորեն հետազոտվել և ուսումնասիրվել է ՀՀ մի շարք նախկին և ներկա կուսակցական առաջնորդների գործունեությունը:

Իր առջև դրված հետազոտական խնդիրների իրականացման նպատակով հեղինակը կիրառել է որոշ որակական և քանակական մեթոդներ: Նա օգտվել է բազմաթիվ աղբյուրներից, ներկայացրել թեմայի վերաբերյալ տարատեսակ հետազոտություններ: Ատենախոսության առաջին գլխում հեղինակը ձևակերպել է հետազոտության տեսամեթոդական բազան: Այստեղ նա ներկայացրել է քաղաքական գիտության մեջ կուսակցական առաջնորդության ինստիտուտի վերաբերյալ առկա տեսական մոտեցումները, քննարկել կուսակցական լիդերության քաղաքական ղեկավարման դրսևորման առանձնահատկությունները և տվել գիտագործնական մեկնաբանություններ: Հետազոտության երկրորդ գլխում վերլուծության է ենթարկվել ՀՀ քաղաքական համակարգի կերպափոխման առանձնահատկություններն և ժողովրդավարացման գործընթացների համատեքստում կուսակցական առաջնորդության ինստիտուտի ձևավորման ու դրա կայացման վրա ազդող գործոնները: Ինչ վերաբերում է երրորդ գլխին, ապա այստեղ հեղինակը նկարագրել է ՀՀ-ում կուսակցական առաջնորդության զարգացման առանձնահատկությունները անկախության շրջանում:

Թեկնածուական ատենախոսությունում օգտագործվել են կուսակցական առաջնորդության վերլուծության համար անհրաժեշտ նյութեր՝ քաղաքական կուսակցությունների ծրագրեր և կանոնադրություններ, կուսակցական լիդերների ելույթների խոսույթային վերլուծություններ և այլն:

Ըստ հեղինակի՝ հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ այս աշխատությունը առաջին հետազոտությունն է, որը համընդգրկուն կերպով անդրադառնում է ոչ միայն կուսակցական առաջնորդների կայացման առանձնահատկություններին ՀՀ-ում: Այստեղ նաև տրվում է ՀՀ կուսակցական առաջնորդների կայացման տիպաբանությունը տարբեր հիմքերով: Այս իմաստով, կուսակցական լիդերների հետազոտությունը իրականացվել է ժամանակային առումով շրջափուլերի բաժանման և ազդող գործոնների բացահայտման ու վերհանման սկզբունքի հիման վրա:

Աշխատանքը, բնականաբար, զերծ չէ նաև որոշակի թերություններից.

1. Անհասկանալի է ատենախոսության ներածությունում (էջ 13-14) առանձին ձևակերպված երկու կետերի անհրաժեշտությունը՝ «աշխատանքային վարկած» և «առաջարկվող հիպոթեզ»: Հաշվի առնելով, որ հիպոթեզը թարգմանաբար նույն վարկածն է:
2. Որոշակի թերություններ են առկա գրականության ցանկի հետ կապված.

   ա. այբբենական կարգի հիմքում ատենախոսը, չգիտես ինչու, դրել է ոչ թե հեղինակների ազգանունների, այլ անունների առաջին տառը,

   բ. որոշ դեպքերում նշվում են հեղինակների անվան առաջին տառերը, իսկ որոշներում՝ անունները ամբողջությամբ,

   գ. մի քանի դեպքում նշվում է հրատարակչությունը, իսկ մնացածում՝ ոչ,

   դ. այն գրականությունը, որը ատենախոսը առանձնացրել է «սկզբնաղբյուրներ» անվան տակ, մեր կարծիքով, չի համապատասխանում սկզբնաղբյուրի ընդունված ըմբռնման հետ:
3. Ատենախոսության սեղմագրում աշխատանքի անվանման թարգմանության մեջ սխալներ կան՝ «կուսակցական լիդերությունը» պետք է թարգմանվեր ոչ թե

«партийное руководство», այլ՝ «партийное лидерство»; «կայացման գործընթացը» ոչ թե՝ «процесс создания», այլ՝ «процесс становления»: Ընդ որում, ատենախոսության հայերեն անվանման մեջ ճիշտ կլիներ օգտագործել որ թե «լիդերություն», այլ «առաջնորդություն» բառը:

4. Տարակուսելի է հեղինակի կողմից ներկայացվող ՀՀ կուսակցական առաջնորդության տիպաբանություններից մեկի չափորոշիչը, որը ներկայացնում է արտաքին քաղաքականության կողմնորոշումը (էջ 96): Խնդիրը կայանում է նրանում, որ այդ կողմնորոշումը շատ դժվար է առանձնացնել կոնկրետ անհատի և կուսակցության դիրքորոշման տեսանկյունից: Այդ պատճառով այդպիսի տիպաբանությունը կարելի է դիտարկել որպես ոչ հստակ:
5. Աշխատության հիմնական մասում և եզրակացության մեջ առկա է որոշ շփոթմունք, կապված կուսակցական լիդերության ձևավորման հետ, քանի որ այս համատեքստում հեղինակը շփոթում է «քաղական առաջնորդություն» և «քաղաքական ընտրանի» հասկացությունները, ներկայացնելով «ղարաբաղյան շարժման ակունքներում կանգնած կուսակցական լիդերներ», «1990-ականներից քաղաքական գործութեություն ծավալած լիդերներ», «ԽՍՀՄ նոմենկլատուրայի կուսակցական լիդեր» տեսակները որպես կուսակցական լիդերների տիպեր (էջեր 140-141, հետագայում այդ տեսակները թարմացվում են): Մեր կարծիքով աշխատանքում հիմնականում նկարագրվում է էլիտաների կայացման գործընթացը, այլ ոչ թե լիդերության/առաջնորդության ինստիտուտը:
6. Նաև կարելի է առանձնացնել մի քանի առաջարկ, որոնք կարող էին հարստացնել ուսումնասիրության արդյունքները.

   ա. տեսական մասից հետո հեղինակը միանգամից անցնում է ՀՀ կուսակցական առաջնորդության վերլուծությանը, պատշաճ կերպով չանդրադառնալով կուսակցական լիդերության ինստիտուտների կայացմանը այլ երկրներում: Ցանկալի կլիներ նաև, որ աշխատության տեսական բաժնում դիտարկվեր կուսակցական ֆորմալ և ոչ ֆորմալ լիդերության հիմնահարցը (օրինակ՝ ԱՄՆ-ում կուսակցական և պետական առաջնորդության

տարբերությունը, ՌԴ-ում «Միացյալ Ռուսաստան» կուսակցության ղեկավարման առանձնահատկությունները, ՀՀ-ում 1998-2008 թթ. իշխող կուսակցության կարգավիճակը), ինչը ավելի կհստակեցներ հետազոտության առարկան:

բ. Քանի որ հետազոտության առարկան չի սահմանափակվել որոշ ժամանակահատվածով, հեղինակը կարող էր նաև անդրադառնալ մի շարք հարցերի, որոնք ցույց են տալիս ՀՀ-ում կուսակցական լիդերության ինստիտուցիոնալ ավանդույթը՝ Առաջին հանրապետությունում տեղ գտած կուսակցական առաջնորդության պրակտիկան, Սփյուռքում ավանդական կուսակցությունների առաջնորդության ինստիտուտը, Հայկական ԽՍՀ-ում կուսակցական առաջնորդության առանձնահատկությունները:

Ատենախոսության մեջ ներկայացված եզրակացությունները հիմնավոր են և փաստարկված: Հեղինակը կարողացել է հաջողությամբ իրականացնել ատենախոսության սահմանված նպատակը և հիմնականում լուծել առաջադրված խնդիրները: Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է դրա հիմնական դրույթները և համապատասխանում աշխատանքի բովանդակությանը: Վահե Պողոսյանի հեղինակած հոդվածները նույնպես արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

ՀՌՀ քաղաքագիտության ամբիոնը՝ որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ ***Վահե Ոսկանի Պողոսյանի*** քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ***«Կուսակցական լիդերության ինստիտուտի կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում»*** թեմայով ատենախոսությունը բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է **ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ.Լ. Սարգսյան/

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանի

Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ.Գ. Վանանբաբովա